Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան
(Պատվիրատուի ղեկավար անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

Արձանագրություն N 2

«ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
(Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման)

ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 **02 փետրվարի 2018թ. ժամը՝ 11:00**

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱՊ)՝	**Ա. Գրիգորյան**
Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)՝	**Հ. Ազատյան**
Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)՝	**Վ. Մանուկյան**
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)՝	**Ա. Մկրտչյան**
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)՝	**Է. Հովսեփյան**
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)՝	**Ա. Ղարիբջանյան**

Ընդունել ի գիտություն, որ՝

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի մատակարարման մրցույթին մասնակցելու հրավերը 24.01.2018թ հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումներ կատարելու ԳՀ ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև www.armeps.am էլեկտրոնային կայքում:

բ. Գնային առաջարկները պետք է բացվեին 31.01.2018թ., ելնելով armeps.am համակարգի հետ կապված տեխնիկական խնդիրներից (որի մասին N 07/27.5.4/725-18 ելից գրությամբ տեղեկացվել է լիազոր մարմնին), բացվել են 2018 թվականի փետրվարի 2-ին՝ ժամը 11:00-ին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. www.armeps.am կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Նորմա-Պլյուս» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
2.	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2
3.	«Սմարթլայն» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 110
4.	«Մեծ ծիածան» ՍՊԸ	ք. Երևան, Ա. Ավետիսյան 78շ. Բն.3
5.	«Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ	ք. Երևան, Իսակովի փ. 42/4 57

ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ **«Մեծ ծիածան» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի, որում առկա է հետևյալ անհամապատասխանությունը՝ հավելված 10-ի մեջ (տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրով ամրագրված գումարի մեջ դիտվում է անհամապատասխանություն թվային և տառային եղանակով գրված գումարների միջև):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ կետը՝ համաձայն որի, եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը, ներկայացված հայտում ճիշտ էր թվերով նշված գումարը, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետով «Մեծ ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

4.Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ՝

4.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

Հ/Փ	Ապրանքատեսակի անունը	«Սմարթլայն» ՍՊԸ		«Պատրոն ՌՄ» ՍՊԸ		«Մեծ ծիածան» ՍՊԸ		«Նորմա պլյուս» ՍՊԸ		«Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ		Նախա-հաշվային գները հազար
		գինը Առանց ԱԱՀ-ի	Գինը Ներառյալ ԱԱՀ	գինը Առանց ԱԱՀ-ի	Գինը Ներառ-յալ ԱԱՀ	գինը Առանց ԱԱՀ-ի	գինը Ներառ-յալ ԱԱՀ	գինը Առանց ԱԱՀ-ի	գինը Ներառ-յալ ԱԱՀ	գինը Առանց ԱԱՀ-ի	գինը Ներառ-յալ ԱԱՀ	
1	Քարթրիջներ	258333	310000	396000	475200	124167	149000	383250	459900			350000
2	Քարթրիջներ	230833	277000	294000	352800			354950	425940			350000
3	Քարթրիջներ	115417	138500	142875	171450			142500	171000			165000
4	Քարթրիջներ			81650	97980			79990	95988			120000
5	Քարթրիջներ ✓			106150	127380			103320	123984	116000	139200	120000
6	Քարթրիջներ ✓			106150	127380			103320	123984	116000	139200	120000
7	Քարթրիջներ ✓			106150	127380			103320	123984			120000
8	Քարթրիջներ	340000	408000	373625	448350			412425	494910			525000
9	Քարթրիջներ ✓			155125	186150			161225	193470			175000
10	Քարթրիջներ	490000	588000	617400	740880			654990	785988			780000
11	Քարթրիջներ			416500	499800			629970	755964			690000
12	Քարթրիջներ			408300	489960			419990	503988			540000
13	Քարթրիջներ			392000	470400			401500	481800			480000

5. ընթացակարգի մրցույթի գնահատման արդյունքների վերաբերյալ

5.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած (բավարար գնահատված) գնային առաջարկները՝ հանձնաժողովն **արձանագրեց՝**

ա/ Ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ չափաբաժինների համար մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5.2 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները՝ հանձնաժողովը **որոշեց՝**

ա/ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները ... *եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստը կասեցվում է և հանձնաժողովի քարտուղարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված մասնակիցներին ծանուցում է բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: Բանակցությունները վարվում են ոչ շուտ քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2-րդ աշխատանքային օրը):*

Հանձնաժողովը **որոշեց՝ 07.02.2018թ.** ժամը 11:00-ին հանձնաժողովի նիստ հրավիրել՝ «Նորմա-Պլյուս», «Պատրոն ՌՄ», «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ-ների կողմից առաջարկած գների նվազեցման շուրջ բանակցությունների նպատակով:

Բանակցությունները տեղի կունենան ք. Երևան, Մ.Մկրտչյան հասցեում:

5.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկրոնային եղանակով հարցում է ներկայացրել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հարվերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

5.4 Հանձնաժողովի անդամներին կտրամադրվի հաղթող մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկը և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

ա/ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժնի համար «Սմարթլայն» ՍՊԸ-ին, 4-րդ 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին, 8-րդ չափաբաժնի համար «Սմարթլայն» ՍՊԸ-ին, 9-րդ չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 10-րդ չափաբաժնի համար «Սմարթլայն» ՍՊԸ-ին, 11-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինների համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին:

բ/ ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել 1-ին չափաբաժնի համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, չափաբաժինների համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 9-րդ չափաբաժնի համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին, 10-րդ չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 11-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինների համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին:

գ/ ընթացակարգի երրորդ տեղ զբաղեցնող ճանաչվել 1-ին չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի համար «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 5-րդ, 6-րդ չափաբաժինների համար «Պրոֆիլայն էռ էմ» ՍՊԸ-ին, 8-րդ, 10-րդ չափաբաժինների համար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին:

7. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, սույն արձանագրության 5-րդ կետով սահմանված ժամկետների ավարտից հետո:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱՊ)՝** **Ա. Գրիգորյան**

Գնման Պատասխանատու
Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)՝** **Հ. Ազատյան**

Գնման Պատասխանատու
Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ ԳԱ)՝** **Վ. Մանուկյան**

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)՝** **Ա. Մկրտչյան**

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)՝** **Է. Հովսեփյան**

Գնման Պատասխանատու
Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)՝** **Ա. Ղարիբջանյան**